

ՌԵՆԴԻ-ՄԱՆՈՒ

Dr. A. N. 4.221

1703

ՄԵՆԱԽՕՍԸ

(Արտատպուած «Վան-Տոսպ» ից)

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ԵՊՕԽԱ» Մուգ. պիք. № 8.

1 9 1 6

891.99
P-49

Արմ.

2-4902a

ԲԷՆԳԻ-ՄԱՀՈՒ

891.99

բ-49

19 NOV 2011 2-4902a AM-1703

01 JAN 2009

ԲԿ

ՄԵՆԱԽՈՍԸ

(Արտատպում «Վան-Տոպ»-ից)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԷՊՕԽԱ» Մուգ. պեր. № 8.

1916

ԿՈՅ. № 21747-

4 MAR 2013

24 031

0005 MAR 10



40518-63

Մ Ե Ն Ա Խ Օ Ս Ը

I

Ու Մենախօսը,
Հեծում է մենիկ իր խուցի խորքում,
Դուրսը զանգերն են տխուր զոզանջում,
Աշնաշունչ բամբին հեծեծում է խուլ...
Կարծես մէն մի սոյլ,
Մի մեռնող սրտի խեղդուկ ճիչն է թոյլ,
Որ անյոյս՝ աշնան շնչովն է կանչում...
Կարծես մի անհուն սիրտ է մորմոքում

Դուրսը...

Ու Մենախոսը,

Հեծում է մենիկ իր խուցի խորքում...

«Հիւանդ է հոգիս, սիրտըս վիրաւոր,

«Կամքըս անկայուն, հաւատքըս անդօր,

«Թեկերըս փշրուած, խոհերըս մոլար,

«Իղձերս անօրոշ, ձրգտումս խելառ...

«Մաղձն է ծովացել էութեանս խորքում,

«Եւ ատելութեան շունչն է փոթորկում

«Գառնութեանս ուկէան...

«Կորցնել ամեն ինչ, պահել կեանքն միայն

«Տանջուելու կաբժես կորըստից դաժան...

«Ոչ սէր, ոչ երազ, ոչ յոյս, և... ոչ ոք!

«Գոյութիւնս համակ քայքայուած դամբան,

«Ուր խըտանում է գարշ օդը նեխման...

«Ուր սրբութիւններս, պղծուած, խեղդամահ,

«Ոճրաւեր ընկած՝ փատում են, ահա!

«Ահա անըկուն հաւատքս մարդկութեան,

«Ու հայրենիքի սէրս ու նուիրում,

«Ուրի և արեան հեղեղում կորան:

«Կին, քո պատկերն էլ՝ պաշտումիս խորան,

«Կեղծիքի, կեղտի ճահճումն է լողում:

«Դու հայր, որ կեանքիս զըրգիւր համակ

«Վայլեցիր անյագ, երբ քեզ զոհ բերի:

«Դու մայր, երբ կընոջ այդ թոյլ կըրծքիդ տակ

«Ինձմով զգացիր արգանդդ յըզի,

«Ձուզեցիր, որ սաղմս ծոցումդ ծըլի:

«Դուք քոյր և եղբայր, դուք որ անխըռով,

«Ձըլացաք հոգուս մի կաթիլ գորով,

«Երբ մատղաշ սիրտս էր լուռ հոգեարում,

«Ինքնամաքառման ու լըքման ցաւում:

«Դուք բոլորդ, աւաղ! որ տուայտազին

«Այնքան սիրեցի, իմ սրտի թաքուն

«Ու կոյս խորքերում—այդ գիտեն միայն

«Օրերն իմ արցունք—Ահա և ձեր դին...

«Դիակներ լոկ շուրջս, անվերջ, անհամար...

«Ու ես՝ թուում եմ ինքս իսկ ինձ օտար...

«Ինքս ինձ խորթացած...

«Հիւանդ է հոգիս! դառնօրէն հիւանդ!

«Ի՞նչպէս հանդարտել խռովքս այս անհուն...

«Գալարում է թոյն նողկանքը՝ մարդուն,

«Վըշտից ժայռացած ու քար կըրծքիս տակ:

Ու նա իր աղօտ նայուածքն է յառել
 Պատուհանից դուրս, սեպ բլրան վրայ,
 Որ խիստ, գահավէժ կողերով իջնում,
 Թեքում է յանկարծ, և իր լայն գոգում
 Վերցնում է քաղքի կերտուածքը հսկայ:
 Ու մութն իր պսպղուն լոյսերն է վառել ..
 Ու նա տրտմագին նայուածքն է յառել
 Մինչ փոթորկում է կուրծքն իր վըշտահեղ,
 Ու ժայթքում յոյզեր, ինչպէս անդընդում
 Մըռնջող հեղեղ:

«Փայլում ես, Բաղաք, երկընքի նըման,
 «Այլ զուր ես կեղծում աստղերը մաքուր,
 «Այդ քո լոյսերով, որոնք մահաբոյր
 «Ճահճիդ շըրջմուխի հուրերն են միայն.
 «Եւ դու թուալով մի երկրորդ երկինք
 «Գըրաւում ես քեզ միամիտ սըրտեր,
 «Որոնք ձըգտում են գտնել քո ծոցում,
 «Եւ երանութիւն և բերկրանք և սէր,
 «Եւ մի հանգրուան! ու սակայն կորչում
 «Բո համայնակուլ ախտաթոր ճահճում:

«Այդ խորհըրդաւոր մըշուշդ նըրբին,
 «Արտաթորումն է քո թոյնին ներքին.
 «Իսկ քո կանաչը՝ տըղմաբոյս սէզեր.
 «Քեզանից հասնող ձայները տարտամ,
 «Մարդ սողուններիդ բզզիւնն է կըրբի,
 «Ճիչեր՝ արձակուած խայթովն հեշտանքի,
 «Եւ կամ խայթուածքի ցաւից կենսաբամ:
 «Մարդիկ ապրում են սակայն, այդ ճահճում.
 «Սիրում են, ժպտում, վայելում, զգում...
 «Օհ, գազանային անվերջ յօշոտում.
 «Շընչում են տենդոտ արբշտանքը նըրա.
 «Քամում են, ծըծում հեշտանքն անխնայ,
 «Ու վայրագ կըրբի բաժակն մինչ յատակ.
 «Ճըգնում են վառել ցանկութիւնն անյագ,
 «Յարափոխ տենչի պագշոտ վայելքում,
 «Ու խեղդել բողոքն ընդվըգող խըղճում:
 «Եւ սիրտն են դարձնում, անվերջ ցանկութեանց
 «Անյատակ ովկէան, կեանքն էլ մի ժամանց,
 «Նըրա կըլանող տեսքին յանդիման:
 «Եւ անսթափօրէն հաճոյքից զինով,
 «Սողում են անփոյթ, անխիղճ, անխըռով...
 «Ինքնայօշոտման կըրկէս դիւային,

«Ուր մարմինն է զոհն՝ այսօր՝ վաղն հոգին,
 «Այսօր բնազդն է, վաղն ինքնազսպումն,
 «Այսօր թրոփչքն է, վաղը կաշկանդումն,
 «Այսօր երազն է, փայփայուած, վըսեմ,
 «Վաղը մի էակ, թովիչ, լուսադէմ,
 «Այսօր մի վայելք, վաղը մի պատրանք,
 «Այսօր մի պաշտում, վաղը մի նողկանք,
 «Այնտեղ անդադար պէտք են զոհեր նոր,
 «Ինչպէս կըրկէսի
 «Ձբօսանքն հիւանդ ու ջըլախտաւոր,
 «Ուր պէտք է՝ արիւնն անընդհատ հոսի...

*
 *

«Եկել են նորերն!
 «Ու զարգացման, ու նորութեան ու լոյսի
 «Դիմակին տակ, նենգ շեշտերովը յոյսի,
 «Ազատութեան մաքրութիւնից են խօսում,
 «Մինչ աչքերից տըւփանքի թոյնն է հոսում:
 «Ձահերն իրենց լուսաւորման նոր ճամբին՝
 «Մեռած խիղճն է մարդկային,
 «Ու սըրտերում ապրող յետին սրբութիւնն.
 «Իրենց քայլերդն՝ ցոփութեան խուլ մի հանդիւն.
 «Իրենց աստուածն՝ նիւթից շաղուած մի անդրի,
 «Որ ժայթքում է քէնոտ փրփուրը ժահրի:
 «Այն ինչ հրներն՝ այլասեռման ճահիճում
 «Թաղուած գորտեր, լուռ՝ հեգնանքով հրհուում...
 «Մին հըրէշն է, իսկ միւսը մայրը ճիւղադ,
 «Եւ այդ թոյնի ու տըղմի
 «Մթնոլորտում, իսկ Յոյսն մեռնում է, աւաղ!

«Օ՛հ! Գիտենալ և զգալ,
 «Թէ՛ ինչեք կան ղիմակներ ի տակ խաբող.
 «Տեսնել ամեն ինչ անքող!
 «Մէն մի ծաղիկ թոյն է շնչում իր ծոցից,
 «Մէն մի ժլպիտ՝ սըտութիւն,
 «Շըղարշների երևոյթին տակ անբիծ՝
 «Ախտաբորբոր տըրփիւն,
 «Սիրաժըպիտ՝ մինչ աչքերն են մարմըրում,
 «Թըրթում է սիրտն այլ համբոյրի երազում...
 «Սա թարմ ճակտի գարունին տակ մաքրափայլ,
 «Բոյն է դըրել յափրացումի խոր խոնջէնք.
 «Մին՝ տեսքով իր դէմքին, հանդարտ, անայլայլ,
 «Գեղն է դարձրել չաւրճներին իրրև դէնք.
 «Իսկ մի ուրիշն իր մըտքի ոյժն կամ ոսկին.
 «Այդ սողունն էլ՝ մեղկ հըրապոյրը խօսքին:
 «Բերկրանքն այնտեղ, վայելք, ժըպիտն ու թախիծ,
 «Մերձակայի դէմ մի ոճրով է սընուած.
 «Մագիլ-ձեռքեր, մըտերմօրէն մըխընուած
 «Հոգիներում, ամեն տեղ...
 «Ու գաղտնաքարշ խըլում է «Ես»-ը տըգեղ,
 «Անկըշտօրէն, իր ցանկութեան լոկ հըլու,

«Կեանքն ու ինչքը, սէրն ու պատիւն ու յաճախ
 «Ինչ կեանքիցն էլ է թանգ՝ ձգտումը խիզախ՝
 «Հաւատալու, ստեղծելու, կանգնելու...
 «Եսն ամեն տեղ, Եսն ամեն ինչ, Եսն աստուած,
 «Համայնակուլ ու պահանջկոտ աւելի
 «Քան աստուածներն հըէշ՝ հին հին դարերի,
 «Ու մարդկութիւնն էլ մի վոհմակ կատաղի
 «Գաղանների, իրար արեան ծարաւի:
 «Բայց ոչ ազնիւ, ինչպէս գայլը՝ սարերի
 «Ձիւնոտ լանջում ապաստանած, կամ արի
 «Ինչպէս առիւծն անապատի մենութեան.
 «Ազնիւ՝ իրենց արարքներովն անդիմակ.
 «Ոչ, Եսն հըէշ, գաղաններից էլ գաղան,
 «Կէս ծըպտուած մարդկայնութեան ձին տակ,
 «Իր ոճիրներն անգաղըրում,
 «Անթիւ անվերջ օրէնքներով է ծածկում.
 «Շահադորձման սև ծուղակներ՝ որոնց մէջ
 «Ծծում արւուն՝ հողիների սըրբատենչ,
 «Հոգիների՝ մաքրահաւատ, չապրած գեղ
 «Յնդումները, երազների ցընորբին,
 «Դեռ դրաւուող օրօրներովն հեշտանքին
 «Հաւատալու և սիրելու և տալու ..

«Կուզենայի որ իմ աչքերը փակուին,
 «Մկանջներս էլ, ձայներին դէմ ու լոյսին,
 «Ձը լըսէի, չը տեսնէի էլ ոչինչ.
 «Օհ, մի խաւար, որ կըլանէր ամեն ինչ.
 «Զգայնութեանս մէջ մի հիւլէն քարանար,
 «Ու չըզգայի... Բնչքան դառն է, անհնար,
 «Ապրել, լինել, տեսնել, լըսել, երբ արդէն
 «Էութեանդ մէջ քօղն ընկել է պատրանքին,
 «Երբ նայուածքը՝ զերթ թափանցող ճառագայթ,
 «Սուզում է խոր, հոգիներում իսկ անյայտ,
 «Արարքների խաբող դիմակը պատում,
 «Մըւում մըշուշն երևոյթին, կեղծիքին,
 «Ու խստօրէն մերկացնում
 «Զարհուրելի ու մեղսապիղծ խկութիւնն,
 «Այնքան տըգեղ, որ ցանկանում ես կրկին
 «Ծածկել նըրան խաբէութեան խաւարում...
 «Օհ! սրտախոց, օհ! մահացու գիտակցում...»

* * *

Հակեց իր խոնջած գլուխը կրծքին,
 Ու մընաց երկար լուռ ու մըտասոյզ,
 Յանկարծ մի ժըպիտ թախծոտ, դառնադին,
 Պըրկեց նըրա սեղմ շըրթները մաղձոտ:

«Երբ համահաւասար ոճիրն է գործւում,
 «Ոճիրն է դառնում օրէնք աշխարհում...
 «Կեանքն է մի անմիտ յոռի շըջանակ,
 «Ու ճակատագիրն՝ ինքն իսկ անգիտակ,
 «Կարծում է մարդկանց յառաջ է մըղում,
 «Այն ինչ դարձնում է նոյն շըրջափակում...
 «Բիրտ ոյժն է օրէնքն եղել նախնական,
 «Եւ այժմ էլ «Ես»ի բիրտ ոյժը միայն...
 «Կոյր բաղդն է դարձնում անիւը կեանքին:

«Բայց յաղթանակն այդ Եստիրին ուժեղ,
 «Լինի այդ մի մարդ, լինի այդ մի ցեղ,
 «Այնքան է փրկարուն, այնքան տանջագին,
 «Այնքան յարափոխ!
 «Մի օր քեզ աստուած ըզգալ տիրական,
 «Եւ միւս օր ստրուկ փրչրուած, ոտնակոխ,
 «Մի օր փայփայել արքունանքն յաղթութեան,
 «Եւ միւս օր անկման թունոտ մաղձն ու ոխ,
 «Իզուր է փրչարում՝ հոգին մոռացում,
 «Անըզգայութեան տրմոյն երազում...
 «Այլ յաւէտ անջինջ մնում են սրտում,
 «Հետքերն անցեալին ու վերքերն անբոյժ.
 «Ու մի նոր հարուած բերում մէն մի յուշ,
 «Ու մի յուշ գրգռում մէն մի պատահար,
 «Ու վիշտն իսկ քրնած վերդարթնում է յար,
 «Եւ էութեանդ մէջ մահն է զօղանջում,
 «Պատրանքն է սառչում սեւ մըղձաւանջում:

«Եւ հիւ է կարող խեղդել ձայնն ներքին.
 «Գալարող պըրկում խղճի մեծ ձեռքին.
 «Բղկտող կակիծ, որին չէ կարող
 «Ձանձրոյթն իսկ մեղմել, թոյնովն իր դեղին:
 «Ոչ! քեզ չի փրկել սըքեմը՝ պատան՝
 «Խըստակրօնի, ոչ անապատի
 «Մորեխի սպաս, կամ մաղեայ դօտի,
 «Ոչ էլ ֆաբրիի ցուպն ու պատմութան.
 «Զըկայ մոռացում, չըկայ մենացում,
 «Բանի գոյութեան ցաւն է քեզ կըրծում:

«Օհ, այն անխնայ
 «Ինքնայօշոտումն հոգեմաքառման,
 «Ուր հրճուանքն անգոյն, վայելքն անհըմայ,
 «Յոյսն էլ դիւային բըրքի է նման.
 «Ուր ոչ մի կայան, և ոչ մի դադար,
 «Պրօմէթէոսի սիրտ՝ որ անդադար
 «Արծիւն է կըրծում, և աճում նորից,
 «Մեռնել իսկ՝ կարծես՝ անկարող ցաւից:
 «Իսկ այն ապրումներն՝ անկումից անկում,
 «Որոնումն... ի՞նչի... ոչ մի գիտակցում,

«Եւ ոչ իսկ հաւատ նըրա գոյութեան,
«Մուրիս մէջ անվերջ խարխափում միայն.
«Անկէ լապիւրինթ, ուր աննրպատակ՝
«Զգայնութիւնն է սողում շարունակ.
«Սիրտն էլ խաւարից անինքնաճանաչ,
«Անյոյս, անըզձանք, անսէր, անկարօտ,
«Հոգեւարում է անմեռ, անհաւաչ...»

«Իսկ այն յարաճուն պահանջներն յիմար!
«Որոնք գերում են մարմինը տըկար,
«Ու թեւափըջրում ամեն մի թրուիչ.
«Եւ յափըջտակում մեր խոհերն անդին,
«Ու մեղկ ու անզօր դարձնում հոգին.
«Եւ յափըջտակում հեգնոտ ծիծաղով,
«Եւ կամ ըրրքիչով՝ սուր՝ պատրանքին,
«Լըքում են նորան, լըքում ու կորչում...
«Ինչպէս երեխայ, փայլփլուն գոյների
«Ծտեից ընկած—որոնք խաբուսիկ
«Անհետանում են, մարող շողքերով—
«Մենք լաց ենք լինում... Եւ մենք այրում ենք,
«Ինչպէս թիթեռնիկն, որ պէտք է վառի

«Իր ձրգտած լոյսի խաբող բոցերում...
«Ու մենք ջարդւում ենք, ու մենք ջախջախւում,
«Մեզ խուլ անդունդներ բըշում է հեղեղն
«Մեր սըրտից բղխած:

«Ու մենք մեռնում ենք,

«Աւաղ! մի մահով մահից էլ անգութ
«Դառնում է հոգին մի դիակ անթաղ,
«Շընչելիս մարմնի նեխումը դանդաղ!
«Մեռնում է, ինչ որ աղնիւ է բարի,
«Ինչ որ մարդու մէջ անվերջ դարերի
«Դառն երկունքներն են ուղեցել կերտել,
«Ու դարձնել նրան իր բընազգներից
«Անկախ, ու նըրանց տիրող մի էակ,
«Այն ինչ՝ մեղ յաւէտ նըրանք են գերում»:

«Ես չեմ սողացել միթէ նոյն ճահճում.
«Դառն ինքնադատում!
«Միթէ չեմ խայթել, խըլել ու կեղծել,
«Եւ իմ ընդլըզող խեղճ խիղճս իսկ եղծել...
«Այդ տըխեղձ կեանքում,



«Ձե՞մ փոխանակել հարուած և զրկում.
 «Մի՞թէ կեղծիքի դիմակը դաժան,
 «Ձէ ծածկել խաբող դէմքն իմ դաւաճան,
 «Արարքներն իմ շիւ, մըտքերն իմ յետին.
 «Մի՞թէ չեմ վառել իմ սիրտն՝ իրրեւ ջահ՝
 «Հուսաւորելու իմ ցոփ իղձերի
 «Խրախճանքն անարգ, ու վանել հեռի
 «Հոգուս պաղատող թևերը «խղճա!»
 «Մի՞թէ չեմ ապրել, ինքս էլ՝ հեշտագիւն,
 «Եսի ու կըրքի մոլուցքը ներքին.
 «Ինքնարդարացման հրդերն այն խելառ,
 «Մի՞թէ չեմ հրգել շըրթներով մոլար.
 «Ամեն սրբութիւն կեղտոտել, պըղծել,
 «Վար իմ դիմակն էլ, ինչ հարկ կայ կեղծել...»

Ու թևերին մէջ՝ յուսահատօրէն
 Ծընկներն իր սեղմած, նա մնաց անշարժ,
 Գլուխն հեացող կըրծքին վըրայ քարշ...
 Ու կարծես ժամերն,
 Սևութեան անդունդ այդ հոգում թշուառ,
 Սևի նոր խաւեր բարդում էին յար:

Արդէն քաղաքի լոյսերը հանգչում,
 Ու մարմըում էին, սիրոյ վայելքում
 Խոնջած հեշտավառ աչքերի հանգոյն.
 Գիշերն էլ՝ երկար հսկումից զժգոյն,
 Հորիզոններով հեռանում էր լուռ:
 Եւ օրն էր սողում բըլուրից ներքև
 Դանգաղ, հե ի հե,
 Ինչպէս խիտ ու գորշ կապարեայ հեղուկ,
 Եւ անյայտանում զաղտնի, խուսաբուկ,
 Քաղքի զանգուածի մութ ստուերներում

Վերջալուսային նուրբ նազանքներով
 Օրը տեղի էր տալիս գիշերին,
 Աստղերը՝ կարծես՝ նոր դարձած քընից,
 Իրենց լուսեղէն աչքն էին թարթում.
 Խաւարը վաղուց պատել էր ձորը,
 Քաղաքն էլ ըշտապ լոյսերն էր վառում,
 Ուղեւոր թըլալ մի երկրորդ երկինք...
 Ու Մենախօսը
 Բըլուրն էր ելնում մեղմ ստուերներում,
 Թրթում էր տըփոյն իր դէմքի վըրայ
 Անդորրի լոյսը.
 Ու ձայնն էլ վճիտ ու սիրահնչիւն,
 Հոսում էր ինչպէս վտակի մընջիւն...
 Մի ժըպիտ նըրբին,
 Դողում էր նրա դժգոյն շրթներին,
 Թըլում էր սուղուած մի լուռ աղօթքում,
 Եւ կամ լըսելիս, մի սիրուած երգի
 Թրթումը հալչուն,
 Կամ վայելելիս

Մի անտես ձեռքի փայփայանքն անհուն,
 Կամ մի գեղեցիկ ու ջինջ մըտածման
 Ժըպտելիս լինէր,
 Կամ խորհըրդաւոր ու անլուր ձայներ՝
 Ներշնչման նման՝
 Կարծես մըմընջում նրա ականջին...
 Եւ արտացոլման տակ երանութեան,
 Ոնօսըանում էր, կարծես, մեղմանում
 Կնիքը վըշտի, որ ճակատագիրն
 Խարանել էր Խոր՝ ձեռքովն անխընայ՝
 Նըրա նայուածքում, 'ւ այտերի վըրայ...

«Ձը գիտեմ որտեղ, որ լերկ ժայռի տակ,
 «Ո՛ր վըհի խորքում, որ սարի վըրայ,
 «Կամ որ քաղքենի շիրիմի միջին,
 «Կամ որ ջըրերի անդունդն անյատակ,
 «Կենսախոնջ մարմինս պիտ' անէանայ...
 «Ձը գիտեմ այդ երբ, չը գիտեմ որտեղ՝
 «Արդ՝ ատելութեան շունչն իմ փոթորկուն,

«Եւ ժայռն իմ կըրծբի, դառնութիւնն իմ ծով,
«Յասումն իմ մաղձոտ, և նողկանքն իմ թոյն,
«Ես կը պատանքեմ դիակի հանգոյն,
«Արգահատանքի ցաւոտ ծիծաղով.
«Գոյութեան ցաւն իսկ մեռնում է հոգում,
«Երբ պաղ խղճովս սառ սիրտն է ներում:
«Էլ ոչ ընդվզում, ոչ պոռթկում վայրագ,
«Այլ լուռ հաշտեցում մոխիրների տակ:

«Արդ, ինքնազըսպման մաքրող բոցերում,
«Ես կը վառեմ ձեզ,
«Ո՛վ դուք երազներ, յոյսեր երբեմնի,
«Իզձեր ու յոյզեր սիրոյ կամ փառքի,
«Հեշտանք վայելքներ ու խուլ տառապանք,
«Եւ նիւթակերտման ձրգտող ամեն ջանք,
«Վըշտեր, հատնումներ, տենչեր անանուն,
«Հասնելու անգոյ, մտածին լոյսեր,
«Ու խոնջէնքն անգօր, ձանձրոյթը տըմոյն,
«Անվերջ թուացող դալուկըն ու թոյն
«Դառնացումները և թմրութիւններ
«Մահացման հանգոյն...

«Դուք բոլորդ, որ իմ թըշուառ էութեան
«Հիմքերն էք կազմել, դուք որ կեանքիցն էք
«Ինձ սև կըտակուել,
«Ես ձեզ կը վանեմ, կը փըշրեմ ես ձեզ,
«Դուք եղաք երբեմն, բայց էլ չէք լինիլ...

«Առանց ցանկութեան, և անըսպասում,
«Ես կը թափառեմ կեանքի սև ճահճում,
«Անխոնջ քայլերով ես կը կոխտեմ
«Լըպըրծուն, կեղտոտ յատակը նըրա,
«Արհամարհանքի զըրահիս վըրայ,
«Կը կըրեմ մարդկանց հարուածն հեգնադէմ,
«Ու կը թողում, որ անգիտակցօրէն,
«Իրենց անազգու ժանիքով խայթեն.
«Օհ! ես կը լինեմ այդ մարդկանց միջին,
«Բայց ոչ նըրանցից, ոչ էլ նըրանց հետ:
«Կը թողնեմ բոլոր խոհերն իմ թըռչեն
«Անհունութեան մէջ ու կորչեն անհետ.
«Եւ իմ թափանցած գաղտնիքն իրերին,
«Կը նետեմ աղատ ես չորս հովերին,
«Որ նրանք անեղձ չըբանան յաւէտ:

«Եւ ես կը պոկեմ իմ հոգու խորքից՝
«Թէ հարկ իսկ լինի իմ հոգու գընով՝
«Ինչ որ կեանքիցն է...

«Ինչ որ, ամեն ինչ!

«Եւ ես կամքիս հետ մենացած, անկախ,
«Մի կեանք կը ստեղծեմ ջինջ, երազային,
«Ուր իմ անուրջներս ես կապրեմ անվախ,
«Թէ նրանք՝ յանկարծ՝ դարձօնքից ցընդեն...
«Այնտեղ կը կերտեմ ես ինձ մի Աստուած՝
«Իմ հոգու պատկեր՝ և մի խոր Հաւատ՝
«Իմ իսկ էութեան խորքերից բլղխած,
«Եւ մի Սէր, մաքուր, ինչպէս անաղարտ
«Զիւնը՝ դեռ չիջած կեղտ հողի վըրայ,
«Յըստակ՝ ինչպէս ցօղն՝ որ դեռ չէ հանգչած
«Տերերն վըրայ, մի Սէր՝ այնքան կոյս,
«Որքան շողն այգին, որ նոր կը դողայ
«Խաւարի միջին, դեռ երկիր չիջած.
«Մի Սէր, իմ սրտի թելերից հիւսուած...

* * *

«Ո՛վ Դու նիւթ կեանքիս նիւթեղէն երազ,
«Դու, հուսկ սըրբութիւն, որին իմ հոգու
«Ամեն մի հիւլէն, յաւէտ ծնրադիր,
«Լուռ պաշտամունքի կնդրուկն է ծըխել.
«Դու, մարմնացումը իմ գեղեցկութեան
«Ու ճշմարտութեան հուր երազներին,
«Որոնք՝ սիրավառ՝
«Հոգիս՝ մայրօրէն օրօրել է յար.
«Դու Սէրը! որից կեանքս էի հիւսել,
«Դու որ էութեանս, հէզ, ինքնավըտար,
«Անեղծ, մաքրազարդ տաճարն ես եղել,
«Ես քեզ չեմ վանիլ, ես չեմ ջնջիլ քեզ,
«Իմ հիթերային այս նոր աշխարհից...
«Այլ կը մերկացնեմ քեզ այդ նիւթ մարմնից,
«Կը բիւրեղացնեմ՝ մաքրատենչումի
«Բիւրեղ բոցերում. քեզ կը դարձընեմ

«Մի աննիւթ երազ, անմարմին հուրի,
 «Ես քեզ կը պատիմ յոյզի ու բոյրի
 «Լոյս շրջարշնիրում, և այլևս անդօր,
 «Նիւթի կեղտերով թունաւորելու
 «Իմ աննիւթ կեանքը, աննիւթ աշխարհում.
 «Դու չես ունենալ, թէ ցանկանաս իսկ,
 «Ինչպէս այս կեանքում, և ոչ մէկ անկում...
 «Ուր քո աչքերը տըւփանքի փայլից
 «Էլ չեն վարակուիլ,
 «Ուր՝ կեղծ բառերի գըգուող թաւիշով
 «Պատած՝ վաւաշոտ ու նհնգ մագիւններ
 «Բեզ չեն խոցոտիլ,
 «Ուր խաբող ձեռքեր, տըղժով շաղախուած,
 «Կըրքի նեկտարներ չեն հոսեցընիլ
 «Բո ծարաւ սըրտին,
 «Ուր ըստըրկօրէն քեզ չեն քաշկըռտիլ
 «Ցանկութիւնների շրջովիկ հուրեր,
 «Ճահիճից ճահիճ...
 «Ուր դու չես հարբիլ և անասնանալ
 «Ժահրոտ շրթներից,
 «Եւ ուր թարախոտ, կատղած ժանիքներ
 «Էլ չեն պատառիլ հեշտանքը կըրծքիդ...

«Ուր դու կը լինես այլևս օտար
 «Այն բանին՝ ինչ որ դու էիր երբեմն.
 «Նիւթեղէն մի մարդ, ոչ իսկ մարդ... այլ կին!
 «Եւ որի միայն թոյլ միսն էր հոգին...
 «Մի ամուլ մեղու, թունաւոր ծաղկանց
 «Ծոցում մոլորուած...
 «Դու այդ չես լինիլ իմ նոր աշխարհում,
 «Եւ քո մեղկ մարմինն նոյն իսկ չի ըզգալ
 «Թէ՛ քեզ եմ սիրում...
 «Այնտեղ կը լինես այնպէս անծանօթ
 «Դու քեզ, և այնպէս հիմնօրէն փոխուած,
 «Ուր երբ հանգիպես դու նրան, ապշած՝
 «Հարց տաս թէ հիվ է...
 «Եւ նա կը լինի, ոչ դու և ոչ ոք,
 «Վայ ախ՛ ինչ որ ես ցանկանամ նըրան...

* *

«Այս իմ նոր կեանքին
 «Կը կերտեմ Աստուած,
 «Համագոյութեան իմաստն առեղծուած,
 «Անըմբռնելի ու յար անմեկին,
 «Որին չեն ժպտիլ
 «Մերձենալ՝ երբէք՝ կասկածները չիլ.
 «Եւ ես կընդգրկեմ՝ իբր Հաւատ անբիծ՝
 «Տիեզերական խորհուրդն անթափանց,
 «Որի կուսութեան երբէք չեն հըպիլ
 «Դատումները պիղծ,
 «Ու տըխեղծ կըքերն մարդուն սընապանծ:
 «Ու ես կը կերտեմ բնութիւնն ինձ Տաճար,
 «Արեւն ու լուսինն, աստղերն երկնալառ,
 «Կանթեղներ՝ առկախ անհուն զըմբէթում,

«Սրբատաշ մարմար՝ ձիւները ձըմռան,
 «Սէգ լեռները՝ սիւն, ծովերն՝ աւազան,
 «Ամպրոպն՝ երգէտն, գարունը՝ խընկում,
 «Ամառն ու աշունն՝
 «Քաղցը օրհներգութիւն,
 «Ու շանթերն՝ խարոյկ, կեանքերն՝ ողջակէզ...
 «Ներդաշնակութիւնն՝ համերգ սըրբազան:



* * *

«Ես կանեմ այնպէս,
 «Որ աստուածն իմ վէս,
 «Պատկեր իմ հոգու,
 «Երանութեան լուրթ անդորրը հեղու,
 «Ու հոսի երգն էլ
 «Անսանձ, անարգել,
 «Սըրտիցըս բըղխած, թըրթռայ ամեն տեղ,
 «Սաւառնեն մըտքերս ազատ ու անշեղ,
 «Խոհերիս հանդարտ ու ջինջ ոլորտում...

«Ես ինձ կը ստեղծեմ մի Երազ Աշխարհ,
 «Որ լինի անգոյ, և լինի անմահ!

«Եւ ես կարճակեմ Արարածային
 «Ու Արարչագործ գերազօր Կամքիս
 «Բառը Տենչանքին...

«Եզիր և Դու Կաս!





24031

Apr.

2-49026

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ